ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/78

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝«Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ

Համանման բողոք բերող՝ «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցում, վերելակների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի և «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություններ) կողմից համապատասխանաբար 01.07.2020թ.-ին ներկայացված բողոքը և 17.07.2020թ.-ին ներկայացված համանման բողոքները (այսուհետ՝ նաև Բողոքներ) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ն և «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքներով խնդրել են պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած բողոքը մակագրվել է 01.07.2020թ.-ին:

02.07.2020թ.-ին կայացված որոշմամբ «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/78 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձին «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի ներկայացրած համանման բողոքը մակագրվել է 17.07.2020թ.-ին:

20.07.2020թ.-ին կայացված որոշմամբ համանման բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/78 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.07.2020թ.-ին, 16.07.2020թ.-ին, 23.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքների քննությունն ավարտվել է 23.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ն 01.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. հունիսի 3-ին, ժամը 11:00:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և հայտերի գնահատման արձանագրությունները gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 24.04.2020թ., պայմանագիր կնքելու մասին հայտարարությունները gnumner.am համացանցային կայքում հրապարակվել 26.06.2020թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հրավերի 8.13 կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ.

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ

1. Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 04.06.2020թ. և 05.06.2020թ.:

2. Հայտերի գնահատման նիստը տեղի է ունեցել 23.06.2020թ.:

3. Հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները հրապարակվել են 24.06.2020թ.:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Հրավերի 8.13 կետով սահմանված դրույթը, ըստ որի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր Հայտերի բացման նիստի արձանագրությունները հրապարակեր 08.06.2020թ., մինչդեռ գնահատող հանձնաժողովը բոլոր արձանագրությունները՝ հրապարակել է տեղեկագրում միայն 24.06.2020թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից, «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը:

3. <u>«Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ն 17.07.2020թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-

ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. հունիսի 3-ին, ժամը 11:00:

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ն:

Մինչդեռ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման արձանագրությունները www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է միայն 24.06.2020թ. /թիվ 4 արձանագրություն/, որի 1-ին կետի համաձայն՝ "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ն ընթացակարգի 5 և 6 չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

Իսկ արդեն 26.06.2020թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության համաձայն՝ "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ն ընթացակարգի 5 և 6 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ կիրառվել է 5 օրացույցայի օր անգործության ժամկետ, այսինքն՝ 27.06.2020թ.-01.07.2020թ. ներառյալ:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ս.թ. հունիսի 30-ին, այսինքն անգործության ժամկետը դեռևս չավարտված՝ "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ին է ուղարկվել պայմանագրի նախագիծը և առաջարկվել այն ստորագրել, կնքել և ներկայացնել պատվիրատուին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հրավերի 9.2 կետի համաձայն՝ սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

ա) Նախ, ինչպես հայտնել ենք, Ընթացակարգին հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. հունիսի 3-ին, ժամը 11:00:

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև “ՌԱՖԷԼԳՐԻԳ” ՓԲԸ-ն:

Վերոհիշյալից հետո www.gnumner.am համացանցային կայքում չի հրապարակվել ոչ հայտերի բացման, ոչ հայտերի գնահատման արձանագրությունները, որից “ՌԱՖԷԼԳՐԻԳ” ՓԲԸ-ն կտղեկաներ տվյալ ընթացակարգի ընթացքի մասին:

Մինչդեռ, Օրենքի թե՛ 33-րդ հոդվածը, և թե՛ 34-րդ հոդվածի 8-րդ մասը իմպերատիվ պահանջում են, որպեսզի հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվի տեղեկագրում, իսկ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվի տեղեկագրում:

Փաստացիորեն հայտերի բացումը տեղի է ունեցել 2020թ. հունիսի 3-ին, ժամը 11:00, նույն օը անցկացվել է հայտերի բացման նիստը (03.06.2020թ.), սակայն այդ արձանագրությունը Օրենքի կոպիտ խախտմամբ, հրապարակվել է www.gnumner.am կայքում միայն 24.06.2020թ., այսինքն 21 օր անց, այն դեպքում, երբ Օրենքը պահանջում է այդ արձանագրությունը հրապարակել նիստին հաջորդող օրը:

Նույն իրավիճակը տեղի է ունեցել հայտերի գնահատման նիստի ժամանակ, մասնավորապես, հայտերի գնահատման նիստը հրավիրվել է 05.06.2020թ., սակայն արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում միայն 24.06.2020թ., այսինքն 19 օր անց, այն դեպքում, երբ Օրենքը պահանջում է այդ արձանագրությունը հրապարակել նիստին հաջորդող օրը:

Վերոհիշյա խախտումները իրենց հերթին հանգեցրել են ընթացակարգի ոչ թափանցիկ և ոչ հրապարակային կազմակերպմանը, որի արդյունքում խախտվել է “ՌԱՖԷԼԳՐԻԳ” ՓԲԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Մասնավորապես, եթե “ՌԱՖԷԼԳՐԻԳ” ՓԲԸ-ն հայտերի բացման և գնահատման նիստերից անմիջապես հետո տեղեկանար, որ իր հայտը գնահատվել է բավարար, և վերջինս ձեռք է բերում հաղթող մասնակից դառնալու հնարավորություն, ապա կօգտագործեր այդ օրերը՝ պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներ ձեռք բերելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ կորոնավիրուսի հետ կապված իրավիճակի պայմաններում բանկային համակարգի կողմից բանկային երաշխիքների տրամադրման գործընթացը դարձել է երկարատև պրոսես, որի հետևանքով մասնակիցները բանկային երաշխիքի ձեռբերման գործընթացին ձեռնամուխ

են լինում դեռևս պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց առաջ (առնվազն զբաղվում են գրավադրվող գույքի գնահատմամբ):

Մինչդեռ փաստացիորեն 20 օր անց տեղեկանալով գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքների մասին՝ "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ն զրկվել է այդ հնարավորությունից, որի հետևանքով խախտվել է նրա մասնակցության իրավունքի արդյունավետությունը:

բ) Բացի այդ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ որ անգործության ժամկետը դեռևս չավարտված՝ գնահատող հանձնաժողովի կողմից "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ին է ուղարկվել պայմանագիր կնքելու նախագիծը, որով առաջարկվել է "ՌԱՖԷԼԳՐԻԳ" ՓԲԸ-ին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում այն ստորագրելու որակավորման և պայմանագրի ապահովման հետ միասին՝ պատվիրատուին ներկայացնելու համար:

Մինչդեռ՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքով և Ընթացակարգի Հրավերով հստակ սահմանվում են այն բոլոր նորմերը՝ թե, երբ պետք է գնահատող հանձնաժողովը ներկայացնի ընտրված մասնակցին կնքվելիք պայմանագրի նախագիծը, այն է՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են նաև Հրավերի 9.2 կետով սահմանված դրույթը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից, «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը:

4. <u>«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9899-2020 և 20.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10791-2020 գրություններով դիմել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի կողմից 01.07.2020թ.-ին և «Ռաֆելգրիգ» ՓԲԸ-ի կողմից 17.07.2020թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստերի օրվա, ժամի և վայրի մասին՝ չի ապահովել մասնակցությունը նշանակված նիստերին:

Պատվիրատուն 09.07.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն Բողոք բերող անձի բողոքը հիմնավոր չի համարում և չի ընդունում հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները, մինչդեռ համաձայն նույն օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բողոքը ներկայացրած անձը կարողէ բողոքարկել՝

1) պայմանագիր կնքելու որոշումը՝ անգործության ժամանակահատվածում,

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Տվյալ դեպքում բողոքարկված խնդրի բողոքարկման իրավունքը «Գնումների մասին» ՀՀ օրենքում սահմանված չէ:

Բացի այդ, եթե անգամ ենթադրաբար նման իրավունք կունենա, ապա բողոքարկման ժամկետը բաց է թողնված, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետն ավարտել է 29.06.2020 թվականին, իսկ բողոքը ներկայացվել է 01.07.2020 թվականին, հետևաբար բողոքը ներկայացնելու պահին գնման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակիցներին արդեն տրամադրվել էին կնքվող պայմանագրերը:»:

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերելակների ձեռքբերման նպատակով 27.05.2020թ.-ին հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի 27.05.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 03.06.2020թ.-ին ժամը 11:00-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել չորս կազմակերպություն՝ այդ թվում նաև «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ն ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հաղթող մասնակիցներին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր:

vi. 26.06.2020թ.-ին <u>www.gnumner.am</u> կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 5 օրացուցային օր (27.06.2020թ.-ից 01.07.2020թ.-ը ներառյալ):

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.06.2020թ.-ին <u>yeranuhi.sargsyan@sglmc.am</u> էլեկտրոնային փոստի հասցեից «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ի <u>rafelgrig-a@yandex.com</u> էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է պայմանագրի նախագիծը:

6. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի և «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի կողմից համապատասխանաբար 01.07.2020թ.-ին ներկայացված բողոքը և 17.07.2020թ.-ին ներկայացված համանման բողոքն անհիմն են և ենթակա են ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու

համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 10-րդ հոդվածի.

1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի հրավերի 8.25-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Նույն հրավերի 9.2-րդ կետի համաձայն՝ սույն հրավերի 1-ին մասի 8.25-րդ կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25-րդ կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պատվիրատուն մինչև պայմանագիր կնքելը տեղեկագրում պետք է հրապարակի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն՝ անգործության ժամկետի վերաբերյալ: Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է: Պատվիրատուն անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ընտրված

մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերելակների ձեռքբերման նպատակով 27.05.2020թ.-ին հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի 27.05.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 03.06.2020թ.-ին ժամը 11:00-ին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 23.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

26.06.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 5 օրացուցային օր (27.06.2020թ.-ից 01.07.2020թ.-ը ներառյալ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.06.2020թ.-ին yeranuhi.sargsyan@sglmc.am էլեկտրոնային փոստի հասցեից «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ի rafelgrig-a@yandex.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է պայմանագրի նախագիծը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Հրավերի 9.2-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, իսկ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սահմանված անգործության

ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ բացառելով այլնտրանքային մեկնաբանություն:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 30.06.2020թ.-ին՝ մինչև անգործության ժամկետի ավարտը՝ 01.07.2020թ.-ը, «Ռաֆէլգրիգ» ՍՊԸ-ին ուղարկելով պայմանագրի նախագիծը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը և Հրավերի 9.2-րդ կետը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերությունների կողմից բողոքներով ներկայացված փաստական հանգամանքները համադրելով Պատվիրատուի կողմից թույլ տրված խախտումների հետ, չեն կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը, քանի որ, ինչպես ամրագրված է Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով, անգործության ժամանակահատվածը վերաբերում է այդ ժամանակահատվածում որևէ մասնակցի կողմից ընթացակարգի և/կամ պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը բողոքարկելու հնարավորությանը, ինչը տվյալ դեպքում իրացվել է, այն է՝ անգործության ժամկետում բողոք և ապա նաև համանման բողոք է ներկայացվել Բողոքներ քննող անձին, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ այն նպատակին, ինչին կոչված էր ծառայելու և այն խնդրի կարգավորմանը, ինչի համար օրենսդիրը սահմանել է և Օրենքով նախատեսել է անգործության ժամկետը, իրականացվել է:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ նշած այն հանգամանքի, որ Ընկերությունների կողմից բողոքարկման ժամկետը բաց է թողնված, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետն ավարտել է 29.06.2020թ.-ին, իսկ բողոքը ներկայացվել է 01.07.2020թ.-ին, ապա Բողոքներ քննող անձն հայտնում է հետևյալը.

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և

գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Բողոքներ քննող անձի քննությանը ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են նախքան պայմանագրի կնքումը: Ընդ որում պայմանագիր կնքելու որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել անգործության ժամանակահատվածում:

Տվյալ պարագայում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուն 26.06.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 5 օրացուցային օր: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է, այսինքն անգործության ժամկետը լրանում է 01.07.2020թ.-ը ներառյալ, քանի որ հայտարարությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 26.06.2020թ.-ին, իսկ 26.06.2020թ.-ի հաջորդող օրվանից հաշված 5 օրացուցային օրը դա 01.07.2020թ. է: Հետևաբար Պատվիրատուի այն պնդումը, որ բողոքը ներկայացվել է անգործության ժամկետի ավարտից հետո անհիմն է և որևէ աղերս չունի իրականության հետ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գայանե Նիկողոսի Նիկողոսյան» Ա/Ձ-ի և «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի կողմից համապատասխանաբար 01.07.2020թ.-ին ներկայացված բողոքը և 17.07.2020թ.-ին ներկայացված համանման բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ